Հավելված N 2
ՀՀ վարչապետի N 446 - Ա
որոշման

# ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ

**Գնահատվող ծրագրի անվանումը՝** ______________________________

**Ստուգաթերթի լրացման ամսաթիվը՝** ______________________________

*Գնահատման հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իրականացնում է ներկայացված գնահատման հաշվետվության քննություն և գնահատման որակի չափանիշներին համապատասխանության ստուգում՝ համաձայն հետևյալ գնահատման որակի ստուգման չափանիշների: Հանձնաժողովն այնուհետ ստացված բոլոր արդյունքների միջինացված տվյալներն ամփոփում է մեկ ստուգաթերթում:*

| | Գնահատման որակի ստուգման չափանիշներ/ հարցադրումներ | Այո, լիովին | Այո, մասամբ | Ոչ |
|---|---|---|---|---|
| | **Կարիքների հասցեագրում** | | | |
| 1. | Գնահատման հաշվետվությունը ճշգրտորեն նկարագրում է գնահատման առարկան՝ ներառյալ միջնորդության տրամաբանությունը և դրա նկարագրությունը | | | |
| 2. | Այն ընդգրկում է համապատասխան ժամանակահատվածը, թիրախային խմբերն ու ոլորտները | | | |
| 3. | Այն պատասխանում է տեխնիկական առաջադրանքի բոլոր հարցադրումներին | | | |
| | **Մեթոդաբանության համապատասխանություն** | | | |
| 4. | Գնահատման մեթոդաբանությունը նկարագրված է բավականաչափ մանրամասն | | | |
| 5. | Մեթոդաբանությունը համապատասխանում է ծրագրին | | | |
| 6. | Առկա են հստակ սահմանված չափելի, իրատեսական, իրագործելի չափորոշիչներ/հարցադրումներ | | | |
| 7. | Հաշվետվությունը մատնանշում է գնահատման մեթոդի հետ կապված սահմանափակումները և ռիսկերը | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **Տվյալների վստահելիություն** | | | |
| 8. | Տվյալների հավաքագրման մոտեցումը հստակ բացատրված է և համահունչ է ընդհանուր գնահատմանը | | | |
| 9. | Տեղեկատվության աղբյուրները հստակ ներկայացված են | | | |
| 10. | Տվյալների հավաքագրման մեթոդները և գործիքները կիրառված են ստանդարտներին համապատասխան | | | |
| 11. | Բացատրվել և քննարկվել են տվյալների հավաքագրման սահմանափակումները | | | |
| | **Վերլուծության հավաստիություն** | | | |
| 12. | Վերլուծությունը հիմնված է հավաքագրված տվյալների և փաստերի վրա, կենտրոնացած է առավել կարևոր պատճառների, հետևանքների և ենթադրությունների վրա | | | |
| 13. | Ծրագրային համատեքստն ամբողջովին հաշվի է առնված | | | |
| 14. | Սահմանափակումները հայտնաբերված են, քննարկվել և ներկայացվել են զեկույցում | | | |
| 15. | Խաչվող ազդեցությունները և խնդիրները ներկայացված են առանձին ենթաբաժնով | | | |
| | **Վավեր եզրակացություններ** | | | |
| 16. | Արդյունքներն ամբողջովին ստացվել են  առկա տվյալներից և վերլուծություններից | | | |
| 17. | Մեկնաբանություններն արդարացված են և հիմնավորված փաստարկներով | | | |
| 18. | Քննարկված է արդյունքների ընդհանրացման հնարավորությունը | | | |
| 19. | Եզրակացությունները համահունչ են, տրամաբանորեն կապված են վերլուծությունների հետ | | | |
| 20. | Եզրակացությունները զերծ են անձնական կամ քաղաքական նկատառումներից | | | |
| 21. | Ներկայացված առաջարկություններն օգտակար են | | | |
| 22. | Առաջարկությունները համահունչ են եզրակացություններին | | | |
| 23. | Առաջարկությունները  գործնական, իրատեսական և բավականաչափ հստակ են՝ գործողությունների ուղեցույց մշակելու համար | | | |
| | **Պարզ հաշվետվություն** | | | |
| 24. | Հաշվետվությունը համապատասխանում է ներկայացվող պահանջներին՝ կառուցվածքի և ծավալի առումով | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 25. | Հաշվետվությունը բավարար պարզ է՝ լեզվի տեսանկյունից, և կարող է ներկայացվել տարբեր լսարանների | | | |

**Գնահատման գործընթացի և հաշվետվության որակի համապատասխանության ստուգաթերթը լրացրած՝ գնահատման հանձնաժողովի անդամներ՝**

| | **Անուն, ազգանուն** | **Ստորագրություն** |
|---|---|---|
| **1.** | | |
| **2.** | | |
| **3.** | | |
| **…** | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.04.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ